Պայմանագիր № 1 ՀՀԱԿ-ՄԿՀՀՀԶՔ-21/2

դիզայն-նախագծի մշակման

« 29 » հունիս 2021թ. ք.Երևան

ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ նաև Պատվիրատու), մի կողմից և ԱՁ Գոհար Գևորգյանը (նույնականացման քարտի համարը 005785258, տրված 27.03.2017թ., 003-ի կողմից, ՀՎՀՀ՝ 35095591) (այսուհետ՝ նաև Կատարող) մյուս կողմից կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Հիմնական դրույթներ.

1.1. Պայմանագրում օգտագործվող հիմնական եզրույթները սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ում:

1.2. Դիզայներական նախագծի մշակման աշխատանքների իրականացման կարգը և բովանդակությունը սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 2-ում:

1.3. Դիզայն-նախագծի մշակման տեխնիկական առաջադրանքը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 3-ով:

2. Պայմանագրի առարկան.

2.1. Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը մատուցում է սույն կետի 2.2. ենթակետում նշված ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել Պայմանագրի պայմաններին համապատասխան մատուցված ծառայության դիմաց:

2.2. Կատարողն պարտավորվում է մատուցել ք. Երևան, Կոմիտասի 49/4 հասցեում գտնվող 115 քմ մակերեսով տարածքի (բար) դիզայներական նախագծի մշակման և հարակից բոլոր աշխատանքների իրականացման ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն):

3. Աշխատանքների ծավալը և տեսակները.

3.1. Կատարողը պարտավորվում է դիզայներական նախագիծը կատարել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 2-ում նախատեսված կազմով և ծավալով:

3.2. Դիզայներական նախագիծը Պատվիրատուին է հանձնվում թղթային և էլեկտրոնային տեսքով (բարձր կետայնության պատկերներով կրիչով կամ էլեկտրոնային փոստով):

3.3. Գնումների կառավարման հետ կապված Կատարողի ծառայությունները Պայմանագրով նախատեսված չեն:

3.4. «Այլ ծառայություններ» բաժնի (կարդալ հավելվածը 1-ը) նախագծելը և գնումների կառավարման հետ կապված կատարողի ծառայությունները Պայմանագրով նախատեսված չեն:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը.

4.1. Պայմանագրի գինը կազմում է **550.000 (հինգ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:

4.2. Պայմանագրով նախատեսված վճարումներն իրականացվում են 3 փուլով՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների.

4.2.1. Առաջին փուլ՝ չափագրում, ընդհանուր գնահատական, 3 (երեք) բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ **190.000 (հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամի չափով:

4.2.2. Երկրորդ փուլ, էսքիզային նախագծի ներկայացում (երեք) բանկային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ **180.000 (հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամի չափով:

4.2.3. Պայմանագրի գնի մնացորդային մասը՝ **180.000 (հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամը Պատվիրատուն վճարում է Ծառայությունն ամբողջությամբ ընդունելուց հետո՝ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից **3 (երեք)** բանկային օրվա ընթացքում:

4.3. Վճարումը Պատվիրատուի կողմից կատարվում է ՀՀ դրամով՝ Կատարողի՝ Պայմանագրի 11 կետում նշված հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով:

5. Աշխատանքների կատարման ժամկետը և կարգը.

5.1. Ծառայության մատուցման ժամկետների սկիզբը համարվում է Պայմանագրի կնքման օրը:

5.2. Դիզայներական նախագծի իրականացման ընդհանուր ժամկետը կազմում է **30 (երեսուն)** աշխատանքային օր:

5.2.1. Դիզայներական նախագծի առաջին փուլի (ընտրված ոճի շրջանակներում իրարից սկզբունքայնորեն տարբերվող երկուսից ոչ ավել տարբերակների մշակում և ներկայացում) իրականացման ժամկետը կազմում է **15 (տասնհինգ)** աշխատանքային օր:

5.2.2. Դիզայներական նախագծի երկրորդ փուլի (նախնական նախագիծ) իրականացման ժամկետը կազմում է **10 (տասը)** աշխատանքային օր:

5.2.3. Դիզայներական նախագծի աշխատանքային մասի՝ երրորդ փուլի (նախագիծ) կատարման ժամկետը կազմում է **5 (հինգ)** աշխատանքային օր:

5.3. Դիզայներական նախագծի մշակման ժամկետը հաշվարկված է Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր փուլի ոչ ավել քան **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում համաձայնեցման պայմանով:

5.4. **3 (երեք)** աշխատանքային օրից զատ այն օրերի քանակը, երբ Կատարողի կողմից ներկայացված նյութերը գտնվում են Պատվիրատուի դիտարկման տակ, չեն ընդգրկվում աշխատանքների կատարման համար 5.2. կետով նախատեսված ժամկետներում:

5.5. Մեկ հայեցակարգային տարբերակի շրջանակներում ներկայացված նյութերում փոփոխությունների կատարումն իրականացվում է Պատվիրատուի կողմից Կատարողին

ուղղված գրավոր ծանուցման հիման վրա, ընդգրկվում է 5.2. կետով նախատեսված ժամկետներում և իրականացվում է հիշյալ ծանուցման պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում:

5.6. Կատարողի կողմից ներկայացված նյութերում փոփոխությունները Պատվիրատուի կողմից կարող են կատարվել ոչ ուշ, քան յուրաքանչյուր փուլի հանձնման ամսաթվից **3 (երեք)** աշխատանքային օր առաջ՝ համաձայն Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետների:

5.7. Ցանկացած տարածքի վերաբերյալ Պայմանագրով նախատեսված երկու տարբերակից ավել յուրաքանչյուր լրացուցիչ էսքիզային տարբերակի համար կատարվում է լրացուցիչ վճարում Կատարողի կողմից պատվիրատուի համապատասխան ծանուցումը ստանալու պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում, Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետներն ավելանում են լրացուցիչ էսքիզային տարբերակների համար ծախսված ժամանակի չափով:

5.8. Պայմանագրի 5.2. կետով նախատեսված աշխատանքների իրականացման կարգը կարող է կապված լինել տարածքների գործառնական նշանակության, օբյեկտների հարկերի քանակի և այլնի հետ: Նման դեպքերում Կողմերը կնքում են լրացուցիչ Համաձայնագիր՝ կախված հստակ սահմանված խնդիրներից և առանձին փուլերից:

6. Կատարված աշխատանքների հանձնում-ընդունումը.

6.1. Կատարողի կողմից դիզայներական նախագծի հանձնումը և Պատվիրատուի կողմից դրա ընդունումը կատարվում է փուլային եղանակով և ձևակերպվում Կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի (այսուհետ՝ Ակտ) կազմման միջոցով, ընդ որում, Կողմերն Ակտը ստորագրում են Պատվիրատուին հասցեագրված տվյալ փուլով նախատեսված աշխատանքների ավարտի մասին Կատարողի գրավոր ծանուցման պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում:

6.2. Ընդունված և հաստատված դիզայներական նախագծում Պատվիրատուի կողմից փոփոխություններ կատարելու դեպքում վերջինիս արժեքը և ժամկետները վերանայվում և համաձայնեցվում են Կողմերի կողմից գրավոր եղանակով:

7. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները.

7.1. Կատարողը պարտավորվում է.

7.1.1. Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետում կատարել Պայմանագրով նախատեսված աշխատանքները և Պատվիրատուին փոխանցել տարածքի դիզայներական նախագծի նյութերը:

7.1.2. Պատվիրատուի գրավոր հարցման հիման վրա, վերջինիս տեղեկացնել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքների պատրաստ լինելու մասին:

7.1.3. Պատվիրատուի կողմից դիտարկման և վերանայման առաջարկներ ստանալու պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում ապահովել քննարկման և դիզայներական նախագծի վերանայման ընթացքում որոշումների ընդունումը:

7.2. Կատարողն իրավունք ունի.

7.2.1. Պատվիրատուի համաձայնությամբ աշխատանքն ավարտել վաղաժամկետ՝ այն պատշաճ և ամբողջական ծավալով ավարտելու պայմանով:

7.2.2. Սույն Պայմանագրով իր պարտավորությունների իրականացմանը ներգրավել երրորդ անձանց:

7.3. Պատվիրատուն պարտավորվում է.

7.3.1. Նախքան աշխատանքներ սկսելը Կատարողին հանձնել առկա տեխնիկական փաստաթղթերի պատճենները (Տեխնիկական գույքագրման հաստատության պլանը և, անհրաժեշտության դեպքում, նախագծային փաստաթղթերը):

7.3.2. Կողմերի միջև համաձայնեցված ժամանակահատվածում ապահովել Կատարողի մուտքը տարածք՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար:

7.3.3. Աջակցություն ցուցաբերել Կատարողին՝ Պայմանագրով նախատեսված ծավալներով և պայմաններով աշխատանքների կատարման համար:

7.3.4. Ժամանակին ընդունել և վճարել Պայմանագրով նախատեսված ծավալներով և որակով Կատարողի կողմից իրականացվող աշխատանքների դիմաց:

7.3.5. Կատարողի կողմից դիտարկման և վերանայման առաջարկներ ստանալու պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում ապահովել քննարկման և դիզայներական նախագծի վերանայման ընթացքում որոշումների ընդունումը:

7.3.6. Պատիրատուն պարտավոր է Կատարողին գրավոր տեղեկացնել իր ենթադրվող երկարատև՝ **15 (տասնհինգ)** օրից ավելի բացակայության մասին:

7.4. Պատվիրատուն իրավունք ունի.

7.4.1. Հարգելի պատճառների առկայության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մինչև աշխատանքների ավարտը ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագրից, Կատարողին վճարելով աշխատանքի կատարված մասի համար, և վերջինիս հատուցել Պայմանագրի լուծման հետևանքով առաջացած վնասներն ու կորուստները:

7.4.2. Պատվիրատուն իրավունք ունի մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ Կատարողին նախապահանջ ներկայացնելու՝ Կատարած աշխատանքների Ակտի ստորագրման պահից ոչ ուշ, քան **3 (երեք)** աշխատանքային օր առաջ:

8. Կողմերի պատասխանատվությունը և պայմանագրի լուծման կամ փոփոխման կարգը.

8.1. Կատարողը պատասխանատվություն չի կրում Կատարած աշխատանքների Ակտի ստորագրումից հետո Պատվիրատուի կողմից կատարած որևէ փոփոխությունների համար:

8.2. Պատվիրատուն երաշխավորում է վերակառուցվող տարածքի համապատասխանությունը դիզայներական նախագծին միայն Կատարողի կողմից հեղինակային հսկողության իրականացման պայմանով:

8.3. Այն Կողմը, որն ի վիճակի չէ կատարել Պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները, պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել մյուս Կողմին այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում են նշված պարտավորությունների կատարումը:

8.4. Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի պայմանների խախտման դեպքում մյուս Կողմին իրավունք է վերապահվում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ լուծման պատճառի շարադրմամբ համապատասխան գրավոր ծանուցումը մյուս Կողմին հասցեագրելուց հետո: Խախտումների փաստերը պետք է պատշաճ կարգով ձևակերպվեն նախապահանջների տեսքով: Նման դեպքերում բոլոր փոխադարձ հաշվարկները կատարվում են աշխատանքի փաստացի կատարած ծավալներից ելնելով:

8.5. Կողմերն ազատվում են Պայմանագրով իրենց պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարման համար պատասխանատվությունից, եթե այդ չկատարումը հանդիսացել է Պայմանագրի կնքումից հետո առաջացած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք: Անհաղթահարելի ուժ են համարվում այնպիսի իրադարձությունները, որոնց վրա Կողմը չի կարող ներազդել և որոնց առաջացման համար նա պատասխանատվություն չի կրում, օրինակ՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, ինչպես նաև գործադուլները, կառավարության ակտերը կամ պետական մարմինների կարգադրությունները:

8.6. Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում այն Կողմը, որը վկայակոչում է անհաղթահարելի ուժի ազդեցությունը, պարտավոր է գրավոր եղանակով անհապաղ ծանուցել մյուս Կողմին նման հանգամանքների մասին: Որից հետո Կողմերը պարտավորվում են անհապաղ բանակցություններ վարել՝ որպեսզի համաձայնության գան Պայմանագրում այնպիսի փոփոխություններ կատարելու շուրջ, որոնք Կողմերին անհրաժեշտ են իրենց պարտավորությունների կատարումը շարունակելու համար՝ Պայմանագրի կնքման պահին սահմանված կարգին առավելագույն մոտ նոր կարգով:

9. Այլ պայմաններ.

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների լիակատար և ամբողջավին կատարումը:

9.2. Կողմերը համաձայնվում են, որ դիզայներական նախագծի որոշ հատվածների և տարրերի կառուցվածքը և գույները կհամարվեն մոտավոր՝ տարբեր տեսակի կրիչների և սարքավորումների (համակարգիչների մոնիտորների, էկրանների, սմարթֆոնների, թղթային կրիչների և այլն) միջոցով միանման գունահաղորդման (բնօրինակի վերարտադրության) անհնարինության պատճառներից ելնելով:

9.3. Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9.4. Կողմերը համաձայնվում են, որ դիզայներական նախագծի նյութերը կամ դրանց վերանայված տարրերը հաստատող էլեկտրոնային նամակները, ինչպես նաև Պայմանագրում նշված հասցեներով երկու Կողմերի ուղարկած հարցումները հավասարեցվում են ուղարկող Կողմի ստորագրված փաստաթղթերին: Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի այդպիսի հաստատումները պահանջել թղթային կրիչով և ստորագրությամբ:

9.5. Պայմանագրով չկարգավորված բոլոր պայմաններն ու հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

9.6. Պայմանագրի կատարումից բխող բոլոր վեճերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վեճերի լուծման անհնարինության դեպքում դրանք լուծվում են դատական կարգով: Հիշյալ վեճերի առկայության մասին ցանկացած Կողմից մյուս Կողմին ծանուցում հասցեագրելու պահից **3 (երեք)** աշխատանքային օրվա ընթացքում այդպիսի վեճը պետք է ներկայացվի արբիտրաժային դատարան՝ հայցվորի գտնվելու վայրում:

9.7. Պայմանագիրը՝ ներառյալ դրա հավելվածները, կազմված են 7 (յոթ) թերթի վրա երկու բնօրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

10. Պայմանագրի հավելվածները.

10.1. Եզրույթներ.

10.2. Դիզայներական նախագծի կազմը.

10.3. Տեխնիկական առաջադրանք.

11. Կողմերի հասցեները և վավերապայմանները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	Գոհար Գևորգյան ԱՁ
ՀՎՀՀ՝ 00011624	ՀՎՀՀ՝ 35095591
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի 49/4	Հասցե՝ ք. Երևան, Արագածի փ, 93ա, բն6
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Արաբկիր մասնաճյուղ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 163058101441	h/h 2052832296361001

Հավելված 1

№ 24062024 պայմանագրի

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ/ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Պայմանագրում կիրառվում են համապատասխան սահմանումներով հետևյալ եզրույթները.

1. **Բազային փաթեթ** – Նախագիծ, որը ներառում է չափագրում, 3 սկզբնական տարբերակ հատակագծի՝ կահույքի տեղաբաշխմամբ և վերջնական գծագրերի փաթեթ հետևյալ էջերով (էլեկտրոնային և տպագրած):
   1. Չափագրում
   2. Հատակագիծ՝ կահույքի տեղաբաշխմամբ
   3. Պատերի ապամոնտաժման և կառուցման գծագրեր
   4. Էլեկտրական պարագաների տեղաբաշխման գծագրեր
   5. Սանտեխնիկայի տեղաբաշխման գծագրեր
   6. Դռների բացման գծագրեր
   7. Ջեռուցվող հատակի և ջեռուցման ռադիատորների գծագիր
   8. Օդատարների, օդորակիչների տեղաբաշխման գծագիր
   9. Ջրամատակարարման և ջրահեռացման կետերի գծագիր

2. **Դիզայն փաթեթ** - Նախագիծ, որը ներառում է չափագրում, 3 սկզբնական տարբերակ: Այնուհետև տարածքի եռաչափ տեսքերը մեկ տարբերակով: Այնուհետև վերջնական գծագրերի փաթեթ հետևյալ էջերով (էլեկտրոնային և տպագրած):
   1. Բազային փաթեթը ամբողջությամբ
   2. 3D վիզուալիզացիա, պատկեր
   3. Բոլոր սենյակների փռվածքներ, աշխատանքային գծագրեր:

3. **Բիզնես փաթեթ** - Նախագիծ, որը ներառում է.
   1. Բազային և դիզայն փաթեթը ամբողջությամբ
   2. Հարդարման նյութերի նախահաշիվ (նյութերի անունը, արտադրողը, ներմուծողը, արժեքը)
   3. Սանտեխնիկայի նախահաշիվ (սանտեխնիկայի անունը, արտադրողը, ներմուծողը, արժեքը)
   4. Լուսատուների նախահաշիվ (անունը, արտադրողը, ներմուծողը, արժեքը)
   5. Կահույքի նախահաշիվ
   6. Գնումների ուղեկցում

4. **Դիզայն-նախագիծ** – Պայմանագրի պայմաններին և տեխնիկական առաջադրանքի պահանջներին, ինչպես նաև Պատվիրատուի գրավոր եղանակով շարադրված ցանկություններին (որոնք վերջինս կարող է ներկայացնել աշխատանքների ընթացքում պայմանագրի սահմանված կարգով) համապատասխան գեղարվեստական ձևավորման հայեցակարգի, հատակագծային լուծման և ինտերիերի աշխատանքային գծագրերի մշակման համալիր ծառայությունների մատուցման արդյունք: Պատվիրատուն դիզայն-նախագիծը ստանում է երկու մասով՝ Ուրվանկարային նախագծի և աշխատանքային նախագծի տեսքով, թղթային և էլեկտրոնային կրիչներով:

4.1. Էսքիզային դիզայն-նախագիծն ընդգրկում է 3 DS MAX ծրագրով պատրաստված ֆոտոռեալիստիկ վիզուալացիաներ (մեկ տարածքի համար՝ 2 ռակուրսից ոչ պակաս և ընտրված ոճի շրջանակներում երկու հայեցակարգային տարբերակներից ոչ ավել):

4.2. Աշխատանքային դիզայն-նախագիծը բաղկացած է համալիր գծագրերից, կառուցվածքային էսքիզներից, հաշվարկներից և մասնագրերից, և դրա կազմը կախված է այն հանգամանքից, թե որքանով է անհրաժեշտ առանձին (այդ թվում կառուցվածքային և դեկորատիվ) տարրերի մշակումը: Աշխատանքային նախագծի կազմը և մշակման լրացուցիչ պայմանները ներկայացված են Պայմանագրին կից թիվ 2 հավելվածում:

5. **Տեխնիկական առաջադրանք** - դիզայնի վերաբերյալ ներկայացվող հիմնական ցանկությունների՝ պահանջների այն ցանկը, որով ղեկավարվում է Կատարողը դիզայն-նախագիծը մշակելիս: Տեխնիկական առաջադրանքը պատրաստվում է Կատարողի կողմից Պատվիրատուի հետ օբյեկտի դիզայնի քննարկման արդյունքների հիման վրա և հաստատվում է Պատվիրատուի կողմից մինչև սույն Պայմանագրի ստորագրումը: Տեխնիկական առաջադրանքը կցվում է Պայմանագրի թիվ 3 հավելվածում:

6. **Հեղինակային հսկողություն** – նախագծի մշակողի և նախագծային փաստաթղերի այլ մշակողների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) նկատմամբ հսկողության իրականացման հետ կապված Կատարողի ծառայությունների տեսակներից մեկը, որն իրականացվում է օբյեկտում իրականացվող աշխատանքների համապատասխանությունը աշխատանքային փաստաթղթերում պարունակվող ճարտարագիտական լուծումներին: Հեղինակային հսկողության անհրաժեշտության մասին որոշում ընդունելը վերաբերում է Պատվիրատուի իրավասությանը և սահմանվում է օբյեկտի նախագծման առաջադրանքում:

6.1. Հեղինակային հսկողությունն ընդգրկում է.

6.1.1. Համաձայնեցված նախագծի պատշաճ հեղինակային իրականացման հսկողությունը;

6.1.2. Աշխատանքային փաստաթղթերի անհրաժեշտ լրամշակումը և ուղղումը;

6.1.3. Աշխատանքային փաստաթղթերի և շինարարական-մոնտաժային աշխատանքների մասով Պատվիրատուին խորհրդակցական ծառայությունների մատուցումը;

6.1.4. Չծրագրավորված աշխատանքների իրականացումը (նախնական համաձայնությամբ):

7. **Դեկորատիվ հարդարում** –դեկորատիվ տարբեր իրերի և պարագաների ընտրություն և տարածքի ինտերիերում դրանց տեղակայում. Գեղարվեստի, կերպարվեստի և քանդակի գործերի, դեկորատիվ հարթակների, հեղինակային գործերի և այլն, որոնք իրենց ոճաբանական, կառուցվածքային և գունային հատկություններով կհամապատասխանեն ինտերիերի դիզայն-նախագծի ընդհանուր հայեցակարգին:

8. **Գնումների կառավարում** – անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով օբյեկտի ապահովման հետ կապված, հարդարման աշխատանքներում օգտագործվող նյութերի փուլային մատակարարմանը վերաբերող Կատարողի ծառայությունների տեսակներից մեկը:

9. **Այլ ծառայություններ** – այլ հմտություններ և մասնագիտություններ պահանջվող նախագծեր՝

- Դռների տեսակի և կառուցվածքի գծագիր;
- Օդափոխության սարքավորումների գծագիր (ներածման և արտածման օդափոխություն);
- Օդակարգավորման համակարգի գծագիր;
- Ջեռուցման համակարգի գծագիր (կոնվեկտորներ, մարտկոցներ, ջեռուցման և ջրատաքացման կաթսաներ);
- Թույլ հոսանքով աշխատող սարքավորումների գծագիր (հեռուստատեսություն և հեռահաղորդակցության համակարգեր, սմարթ-հաուս համակարգը և տեսադիտարկման համակարգեր);
- Կոյուղու համակարգի և ախտահանիչների գծագիր:
- "Smart home" համակարգի գծագիր
- Հակահրդեհային համակարգի գծագիր
- Անվտանգության համակարգի համար անհրաժեշտ գծագիր

Հավելված 2

№ 24062024 պայմանագրի

Ք. Երևան, Կոմիտասի 49/4 հասցեում գտնվող 115 քմ հասարակական տարածքի (բար) դիզայն-նախագծի բովանդակությունը

<u>Առաջին փուլ - Էսքիզային</u>	
• Չափագրություն	
• Հատակագիծի կազմակերպում կահույքի տեղաբաշմամբ՝ 3 տարբերակ	Հաստատում
• Դիզայն մոտեցման համար ոճերի ընտրություն ըստ նախընտրելի դիզայն հավաքածուի	Հաստատում
• 3D դիզայն առաջարկ սրահի (Դիզայների առաջարկ՝ • ոճի ընդհանուր վերջնական ընտրության համար)	Հաստատում կամ փոփոխություն
• 3D դիզայն առաջարկ (Դիզայների առաջարկ)	Հաստատում կամ փոփոխություն
• 3D դիզայն առաջարկ (Դիզայների առաջարկ և պատվիրատուի նախընտրելի օրինակի տրամադրում)	Հաստատում կամ փոփոխություն
• 3D դիզայն առաջարկ (Դիզայների առաջարկ և Պատվիրատուի նախընտրելի օրինակի տրամադրում)	Հաստատում
<u>Երկրորդ փուլ - Նախագիծ</u>	
Դիզայներական նախագծման բովանդակությունը և արժեքը	
• 3D դիզայն առաջարկ (որոշ դետալների կամ հատվածների փոփոխություն)	Էսքիզի վերջնական հաստատում
• Այլ ծառայությունների* ընդգրկում նախագծում	Վերջնական հաստատում
• 3D դիզայն առաջարկ՝ վերջնական տեսքեր փոփոխություններից հետո	Վերջնական հաստատում
1. Գծագրերի փաթեթ մաս 1 • Հատակագիծի կազմակերպում կահույքի տեղաբաշմամբ • Պատերի մոնտաժման հատակագիծ • Օդափոխության կետերի գծագիր • Ջեռուցման կետերի գծագիր • Առաստաղի լուսամփոփների տեղաբաշխման նախնական սխեմա • Վարդակների, անջատիչների, հոսանքի կետերի տեղաբաշխման նախնական սխեմա	
<u>Երրորդ փուլ - Նախագիծ</u>	
Դիզայներական նախագծման բովանդակությունը և արժեքը	

1. Գծագրերի փաթեթ մաս 2
   - Առաջին էջ (կազմ)
   - Բովանդակություն (նախագծի գծագրերի ցուցակ)
   - Գլխավոր հատակագիծ
   - Հատակագիծի կազմակերպում կահույքի տեղաբաշմամբ
   - Պատերի մոնտաժման հատակագիծ
   - Օդափոխության կետերի գծագիր
   - Դռների բացման գծագիր
   - Առաստաղի լուսամփոփների տեղաբաշխման նախնական սխեմա
   - Վարդակների, անջատիչների, հոսանքի կետերի տեղաբաշխման նախնական սխեմա
   - Գիպսկարտոնե կոնստրուկցիաների գծագրեր
   - Առաստաղի հարդարման գծագիր
   - Հատակի կազմակերպման գծագիր
   - Սրահի փռվածքներ-գծագրեր
   - Ներկառուցվող կահույքի գծագրեր (պահարաններ)
   - Դիզայներական որոշ հանգույցների գծագրեր (բուխարի, արթհատված)
   - Ներկերի ծավալ և տեսակներ
   - Պաստառների ծավալ և տեսակներ
   - Սալիկների քանակ և անվանումներ
   - Քիվերի (карниз-молдинг) քանակ և տեսակներ
   - Լուսատուների քանակ և անվանումներ ըստ սենյակների

<u>Ծանոթագիր.</u>

1. Նախագծում կներառվի նաև `
   - Հեռակա վերահսկողություն ` հեռախոսազանգեր, WhatsApp, Viber (աշխատանքային օրեր և ժամեր):
   - 15 այց շինարարության տարածք կամ մասնագետների հետ խորհրդատվություն:
2. Աշխատանքի վերահսկողությունը շաբաթական 3-4օր լրացուցիչ համաձայնություն ձեռք բերելու դեպքում՝ լրացուցիչ աշխատավարձ ամսական 60.000 դր
3. Դիզայնի չնախատեսված փոփոխությունները լրացուցիչ պայմանավորվածության համաձայն:
4. Ժամկետները `
   - <u>Առաջին փուլ - Էսքիզային</u> _____ 15 աշխատանքային օր (չհաշված փոփոխությունները)՝ դիզայնը 3 օր:
   - <u>Երկրորդ փուլ -</u> Նախագիծ_____ 10 աշխատանքային օր (չհաշված փոփոխությունները)
   - <u>Երրորդ փուլ -</u> Նախագիծ ___5 աշխատանքային օր:
5. Ցանկության դեպքում նախագծերի փաթեթը հնարավոր է տրամադրել 2 մասից:

<u>Հիշեցում՝</u>

Գծագրերի և էսքիզների հետևյալ տեսակները տրամադրվում են արտադրողի կողմից և ներառված չեն աշխատանքային դիզայն-նախագծում.

- Դռների տեսակի և կառուցվածքի գծագիր;
- Օդափոխության սարքավորումների գծագիր (ներածման և արտածման օդափոխություն);

- Օդակարգավորման համակարգի գծագիր;
- Ջեռուցման համակարգի գծագիր (կոնվեկտորներ, մարտկոցներ, ջեռուցման և ջրատաքացման կաթսաներ);
- Թույլ հոսանքով աշխատող սարքավորումների գծագիր (հեռուստատեսություն և հեռահաղորդակցության համակարգեր, սմարթ-հաուս համակարգը և տեսադիտարկման համակարգեր);